216 Ինչպե՞ս եմ ես ուզում թռչել երկինք,

1. Ինչպե՞ս եմ ես ուզում թռչել երկինք,
Քեզ մոտ լինել, Աստվա՛ծ իմ,
Միայն խնդրում եմ, զորացրո՛ւ Դու ինձ,
Խաղաղություն տուր սրտիս:

Դու ես միայն աղբյուր կյանքիս,
Դու, միայն Դու, ի՛մ Հիսուս թանկագին:

2. Հաճախ տրտմությամբ լցվում է հոգիս,
Ուրախությունս՝ պակասում,
Միայն Քեզ մոտ եմ գտնում ես հանգիստ,
Սիրտս Քեզ է սպասում:

3. Ցավն է ծեծում երիտասարդ կուրծքս,
Խաղաղություն չեմ գտնում,
Այստեղ միայն արցունք է տեսածս,
Տանջվում եմ և տառապում:

4. Իմ հոգին կարոտ է հանգստության
Օթևանում երկնային,
Տե՛ր Հիսուս, եղի՛ր Դու ինձ պահապան
Եվ ինձ հասցրո՛ւ սուրբ կյանքին: